

ԼՈՍ ԱՆՃԵԼՈՍԻ ՇՐՋԱՆԻ ԾՈՒԽԵՐՈՒ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ
ՏԻԿՆԱՆՑ ՄԻՈՒԹԵԱՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԿՈՂՄԷ

Երեքշաբթի, Յունուար 26ի առաւօտուն Տիկնանց Միութեան Կեդրոնական Խորհուրդի Ատենապետ՝ Արաքսի Պոյամեան եւ անդամներ Արփի Պարսամ, Լենա Սիմոնեան, Ալիս Իսկէնտերեան եւ Մելինէ Աղաճանեան հաւաքուեցան Առաջնորդարանի մէջ եւ ժամը 9:30ին ներկայ գտնուեցան Առաջնորդական Ընդհանուր Փոխանորդ՝ Զոզ. Տ. Տաճատ Ծ. Վրդ. Եարտըմեանի հանդիսապետութեամբ կատարուած ժամերգութեան: Զոզեւոր Պատգամը տուաւ Պըրպէնքի Զայց. Առաքելական Եկեղեցւոյ Ծուխի Զոզեւոր Զովիւր՝ Արժ. Տ. Խաժակ Քինյ. Շահպազեան: Ապա Զայր Սուրբի գլխաւորութեամբ հերթաբար խումբով այցելեցին հետեւեալ եկեղեցիները.-

Ժամը 10:30ին այցելեցին Փասատինայի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Զայց. Եկեղեցւոյ Ալֆրէտ եւ Մարկրիթ Յովսէփեան Վարժարանը, ուր հաւաքուեցան եկեղեցւոյ Տիկնանց Միութեան անդամները, ներկայ գտնուեցան նաեւ վարժարանի Ծնողա-ուսուցչական մարմնի անդամները: Այս այցելութիւններուն գլխաւոր պատգամն էր Քրիստոսի կողմէ խօսուած «Երանելիները» (Մատթ. 5-3-10): Այս նիւթի մասին իր պատգամը տուաւ հիւրընկալ եկեղեցւոյ Զոզեւոր Զովիւր՝ Արժ. Տ. Սարգիս Աւագ Քինյ. Փեթոյեան:

Զայր Սուրբն ու Տիկնանց Միութեան խումբը Զալիվուտի Սուրբ Յովհաննու Կարապետ Զայց. Եկեղեցին ժամանեցին կէսօրուան ժամը 12:00ին, արարողութեան ընթացքին իր պատգամը տուաւ Եկեղեցւոյ Զոզեւոր Զովիւր եւ Զարաւային Գալիֆորնիայի Առաջնորդական Փոխանորդը՝ Արժ. Տ. Մանուկ Աւագ Քինյ. Մարգարեան:

Ժամը 2:00ին ժամանեցին Լոս Անճելըսի Սուրբ Յակոբ Զայց. Եկեղեցին, ուր կատարուեցաւ արարողութիւնը եւ հոգեւոր պատգամը տուաւ Ծուխին Զոզեւոր Զովիւր՝ Արժ. Տ. Արշակ Աւագ Քինյ. Խաչատուրեան: Արարողութեան ավարտին տեղի ունեցաւ ընկերային հաւաք:

Իւրաքանչիւր արարողութեան ընթացքին իր սրտի խօսքը եւ Առաջնորդ Սրբազան Զօր օրհնութիւններն ու սիրալիւր ողջոյնները ներկայ գտնուող հաւատացեալներուն փոխանցեց Առաջնորդական Ընդհանուր Փոխանորդ՝ Զոզ. Տ. Տաճատ Ծ. Վրդ. Եարտըմեան: